Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ, ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ ԺԱՄԸ 11:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Հ. Աբրահամյան	Հայաստանի Հանրապետության վարչապետ
Դ. Հարությունյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Գ. Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
Ա. Մկրտչյան	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատար
Ս. Սահակյան	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ
Հ. Բադալյան	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ
Վ. Մանուկյան	Հանրային խորհրդի նախագահ
Վ. Բաբայան	«Բարգավաճ Հայաստան» խմբակցության ներկայացուցիչ
Է. Երիցյան	Հայաստանի համայնքների միության նախագահ

Հրավիրվածներ՝

Ա. Աշոտյան	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար
Ս. Քրմոյան	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Պողոսյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ
Ա. Սարգսյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ
Գ. Համբարձումյան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ–մայոր
Գ. Պողոսյան	Հայաստանի Հանրապետության վարչապետի մամուլի քարտուղար
Ծ. Համբարձումյան	Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Ա. Ասատրյան	Հայաստանի Հանրապետության կառավարության հանրային կառավարման հարցերով խորհրդատու
Կ. Ասատրյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ
Մ. Գալստյան	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալի օգնական
Հ. Քոչարյան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության գնդապետ
Ալ. Զանոտտա	Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության տնտեսական հարցերի և հանրային կառավարման բարեփոխումների գծով խորհրդատու
Ա. Մարգարյան	Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի քարտուղար
Ն. Գյուլնազարյան	ԵԱՀԿ Երևանյան գրասենյակում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու
Ք. Հիլիարդ	Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության առաքելության ղեկավար
Ա. Մքֆարլենդ	Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության Ժողովրդավարության, մարդու իրավունքների գրասենյակի տնօրեն

Ա. Մովսիսյան	Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության ծրագրի ղեկավար
Ն. Թադևոսյան	Համաշխարհային բանկի ԱՃԹՆ-ի (EITI) խորհրդատու
Շ. Դոյդոյան	Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադիր-նախագահ
Վ. Հոկտանյան	Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
Հ. Հարությունյան	Երևանի մամուլի ակումբի փորձագետ

1. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությանը հավանություն տալու մասին

(Արսեն Մկրտչյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի հայտարարությունն այն մասին, որ՝

ա. կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ կառավարության կողմից իրականացվող ներքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից է, իսկ կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական երաշխիքներից մեկը՝ հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ համակարգը: Այդ նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165-Ն որոշմամբ ստեղծվել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, որն իրականացնում է Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգումն ու դրանց կատարման նկատմամբ հսկողությունը: Կարևոր է կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը և համագործակցությունը, քանի որ նպատակն այս ճևաչափի շուրջ այն ուժերին, կազմակերպություններին համախմբելն է, ովքեր իսկապես ասելիք ու պատկերացում ունեն մեր ընդհանուր նպատակներին հասնելու ճանապարհին: Սա հարթակ է, որտեղ կարելի է միավորել, համախմբել ուժերը, փորձառությունը և գնալ վճռական քայլերի:

ՀՀ կառավարությունը գիտակցում է կատարվելիք քայլերի անհրաժեշտությունն ու կարևորությունը և հետևողականորեն առաջ է մղելու հակակոռուպցիոն բարեփոխումներին ուղղված գործընթացը: Աշխատանքները լինելու են թափանցիկ, և արվելու է ամեն ինչ, որպեսզի դրանց արդյունքները հանրության համար լինեն տեսանելի,

բ. ներկայացված ռազմավարությունը մշակվել է շահագրգիռ մարմինների առաջարկությունների հիման վրա և ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է նաև հանրային քննարկման.

2) հանձնարաել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության վերջնական տարբերակը ներառել ՀՀ կառավարության նիստի օրակարգ:

2. Իրավաբանական անձանց քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկում

(Արսեն Մկրտչյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ արդարադատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Արսեն Մկրտչյանի տեղեկացումն այն մասին, որ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի և ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի հայեցակարգի դրույթներով նախատեսվում է սահմանել կոռուպցիոն հանցագործությունների համար իրավաբանական անձանց վարչական և (կամ) քրեական պատասխանատվության ենթարկելու շրջանակը, քանի որ իրավաբանական անձանց կոռուպցիոն իրավախախտումների համար վարչական և (կամ) քրեական պատասխանատվության նախատեսումը կոռուպցիայի դեմ պայքարի հրատապ քայլերից է.

2) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարին՝ մշակվող ՀՀ նոր քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում արտացոլել իրավաբանական անձանց քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման մոտեցումները և համապատասխան նախագիծը սահմանված կարգով շրջանառել ու ներկայացնել ՀՀ կառավարություն:

3. Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատակարգի հաստատում

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատակարգը.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետ, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի ստորագրմանը:

4. Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող փորձագիտական հանձնախմբի աշխատակարգի հաստատում

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող փորձագիտական հանձնախմբի աշխատակարգը.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող փորձագիտական հանձնախմբի աշխատակարգը հաստատելու մասին որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետ, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի ստորագրմանը:

5. Փորձագետների ընտրության կարգի, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող չափանիշների սահմանում

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) սահմանել փորձագետների ընտրության կարգի, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող չափանիշները.

2) ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի հայտարարությունն այն մասին, որ փորձագետների ընտրության ճիշտ չափանիշներ սահմանելու և համապատասխան գիտելիքներով օժտված փորձագետներ ընտրելու դեպքում հնարավոր կլինի ձևավորել օբյեկտիվ պատկեր՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ընթացքի վերաբերյալ և թերությունների դեպքում օպերատիվ կարձագանքենք և կգտնենք կարգավորման ուղիներ.

3) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ փորձագետների ընտրության կարգի, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող չափանիշները սահմանելու մասին որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետ, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի ստորագրմանը:

6. ԱՄՆ-ի ՄԶԳ-ի (USAID) հետ համագործակցության համաձայնագրի կնքման առաջարկությանը (դրան կից փաստաթղթեր՝ ծրագրի նկարագիր և բյուջե) հավանություն տալու մասին

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի զեկուցումն այն մասին, որ ԱՄՆ-ի ՄԶԳ-ն պատրաստակամություն է հայտնել աջակցել ՀՀ կառավարությանը կյանքի կոչելու ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 750 հազ. ԱՄՆ-ի դոլար: ՀՀ կառավարությունը մասնակցելու է ծրագրի համաֆինանսավորմանը՝ մինչև 25 տոկոսի չափով, այդ թվում՝ բնաիրային տեսքով: Օժանդակությունն ուղղված է լինելու փորձագիտական հանձնախմբի ստեղծմանը,

2015-2018 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության գործարկմանը և շահագրգիռ կողմերի համար հասարակայնության հետ կապերի ռազմավարության և իրականացման ծրագրի մշակմանն ու իրականացմանը: Ծրագիրը հնարավորություն կտա ներգրավելու բարձրակարգ միջազգային և տեղական փորձագետների՝ Հակակոռուպցիոն ռազմավարության գործարկման համար գերակա ճանաչված կրթության, պետական եկամուտների, առողջապահության և ոստիկանության կողմից քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ոլորտներում կարիքների և ռիսկերի գնահատման, խնդիրների վերլուծության, կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման, մասնագիտական և մեթոդական խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև հասարակության տարբեր թիրախային խմբերի իրազեկվածության աստիճանի բարձրացման նպատակով.

2) հավանություն տալ ԱՄՆ-ի ՄԶԳ-ի (USAID) հետ համագործակցության համաձայնագրի կնքման առաջարկությանը (դրան կից փաստաթղթեր՝ ծրագրի նկարագիր և բյուջե).

3) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ համապատասխան որոշման նախագիծն ընդգրկել ՀՀ կառավարության նիստի օրակարգ:

7. Հայտարարագիր չներկայացնելու համար պատասխանատվության միջոցների սահմանման վերաբերյալ քննարկում

(Սիրանուշ Սահակյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ բարձրաստիճան անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ Սիրանուշ Սահակյանի զեկուցումն այն մասին, որ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համատեքստում կարևոր և պարտադիր միջոցառում է հայտարարագրման գործընթացը կանոնակարգող նորմերի պահանջները չկատարելու համար իրավական ներգործության միջոցների սահմանման կիրառման գործուն ընթացակարգերի մշակումը: Այդ նպատակով 2015 թվականի մարտ ամսին ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հայտարարագրման կանոնակարգումները խախտելու համար պատասխանատվության միջոցների կիրառում:

Մասնավորապես, որպես ընդունելի պատասխանատվության տեսակ ընտրվել է վարչական պատասխանատվությունը, որպես տույժի տեսակներ՝ նախազգուշացումը և տուգանքը: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրման պարտականության պատշաճ կատարումը Հայաստանում խթանելու հնարավոր լուծումներից բացի, կարևոր է նաև հայտարարագրման օրենսդրության խախտման համար գործող պատասխանատվության միջազգային համակարգերը ներդնելու հնարավորության հարցը, այդ թվում՝ խախտումները քննող, դրանց համար պատասխանատվության միջոցներ կիրառող մարմինների գործառույթները և կիրառվող պատասխանատվության տեսակները, որոնք կարող են ուսանելի լինել Հայաստանում հայտարարագրման համակարգը զարգացնելու գործում: Հատկանշական է քննարկման առարկա դարձնել կեղծ տվյալներ ներկայացնելու կամ հայտարարագիր չներկայացնելու համար վարչական իրավունքից զատ իրավունքի այլ ճյուղերով պատասխանատվություն սահմանելու նպատակահարմարության հարցը.

2) ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի հայտարարությունն այն մասին, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումից ի վեր բազմաթիվ քննադատություններ են եղել հայտարարագրման ինստիտուտի անկատարության վերաբերյալ: Հայտարարագրման ինստիտուտը համեմատաբար նոր է և գուցե օրենսդրությամբ ամբողջապես կարգավորված չէ, սակայն այս ոլորտում ահռելի աշխատանք է կատարվել: Հենց այդ աշխատանքի շնորհիվ է, որ զանգվածային լրատվության միջոցները կարողանում են հետևել հայտարարագրման ընթացքին, բացթողումներ նկատել և քննադատել.

3) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարին՝ եռամսյա ժամկետում ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով էթիկայի հանձնաժողովին հնարավորություն կտրվի հայտարարագրման գործընթացի կանոնները խախտելու համար պաշտոնատար անձանց ենթարկել վարչական պատասխանատվության:

8. Տեղեկատվության ազատության ոլորտում առկա իրավիճակի ներկայացում, առկա խնդիրների քննարկում

(Շուշան Դոյդոյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանի կողմից տեղեկատվության ազատության ոլորտում առկա իրավիճակի ներկայացումը, ինչպես նաև զեկուցումն այն մասին, որ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատանքի կարևոր նախապայմանը քաղաքացիական հասարակության վստահության ձևավորումն է՝ խորհրդի աշխատանքի շոշափելի արդյունքներով: Դրանից բացի՝ տեղեկատվության մատչելիությունը կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության ապահովման հիմնական գործիքն է, քանի որ այն ապահովում է ՀՀ կառավարության գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, մարդկանց հիմնական իրավունքների իրացումը և իշխանության, ՀՀ կառավարության գործունեության հանդեպ վստահության ձևավորումը.

2) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարին՝

ա. երկամսյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի նախագծեր,

բ. տեղեկատվության ազատության դաշտը հնարավորինս պարզեցնելու տեսանկյունից վերանայել տեղեկատվության ազատության ոլորտը կարգավորող օրենսդրությունը և ըստ անհրաժեշտության ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

9. Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման և նախարարներին կից Հանրային խորհուրդների ստեղծման վերաբերյալ խնդիրների քննարկում:

(Հերիքնազ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Երևանի մամուլի ակումբի փորձագետ Հերիքնազ Հարությունյանի զեկուցումը քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն

իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման և նախարարներին կից Հանրային խորհուրդների ստեղծման վերաբերյալ.

2) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարին՝ երկամսյա ժամկետում քննարկել հնչեցված զեկույցի առաջարկությունները և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել ՀՀ նախարարներին կից հանրային խորհուրդների օրինակելի աշխատակարգը:

10. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI) միանալու հայտարարություն

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի՝ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI)միանալու մասին հայտարարությունը.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ համակարգել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI) միանալու գործընթացները և համապատասխան ստանդարտի ներդրման աշխատանքները.

3) ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի շրջանակներում ստեղծել բիզնես հանրության հետ համագործակցության հարթակ, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի հետ կապված հարցերը բարձրացնելու նպատակով և

տարվա ընթացքում առնվազն մեկ, երկու անգամ բիզնեսի ներկայացուցիչների հետ կազմակերպել հանդիպումներ՝ հետագայում արդյունավետ լուծումներ գտնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
հակակոռուպցիոն ծրագրերի
մոնիթորինգի բաժնի պետ, խորհրդի
քարտուղարության պատասխանատու Կամո Ասատրյան